	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ	ACBA 75 ORD 11#6		
		<i>Հաստատման ամսաթիվ</i> 25/04/19	<i>Խմբագրություն</i> 10	<i>էջ 1/3</i>

ՆՊԱՏԱԿԸ

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ հետ կապված անձանց հետ գործառնությունների իրականացման կարգի (այսուհետ՝ Կարգ) նպատակն է սահմանել «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հետ կապված անձանց հետ իրականացվող գործառնությունների սկզբունքներն ու ընդհանուր պայմանները:

ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Կարգը կիրառվում է Բանկի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կողմից:

ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք	
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ աշխատակիցներին սպառողական և հիփոթեքային վարկերի տրամադրման կարգ	ACBA 75 ORD 10
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ավանդների ընդունման ընթացակարգ	ACBA 75 PR 09
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ մասնաճյուղերի և կենտրոնական գրասենյակի միջև ֆոնդերի փոխանցման գնագոյացման մեթոդական ցուցում	eFO 74-00-35
Ֆոնդերի փոխանցման գնագոյացման (FTP) շրջանակներում սահմանվող տոկոսադրույքներ	eFO 72-03-09
Բիզնես վարկի/Էքսպրես բիզնես վարկի պայմանագիր	eFO 72-00-316
Բիզնես վարկային գծի պայմանագիր	eFO 72-00-317

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկի հետ կապված անձինք՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված անձինք:

ԳԼՈՒԽ 1. ԲԱՆԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄԸ


1.1. Բանկի հետ կապված անձինք (բացառությամբ՝ «ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ-ի) վարկավորվում են համաձայն տվյալ պահին Բանկում գործող համապատասխան ներքին իրավական ակտերի:

1.2. «ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ-ին վարկերը/վարկային գծերը տրամադրվում են համաձայն սույն կարգի 4-րդ գլխի:

1.3. Բանկի աշխատակից հանդիսացող Բանկի հետ կապված անձինք սպառողական վարկերը ստանում են նույն պայմաններով (համաձայն «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ աշխատակիցներին սպառողական և հիփոթեքային վարկերի տրամադրման կարգի [ACBA 75 ORD 10](#)), ինչ պայմաններով ստանում են Բանկի այն աշխատակիցները, որոնք չեն հանդիսանում Բանկի հետ կապված անձինք:

ԳԼՈՒԽ 2. ԲԱՆԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑԻՑ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ

2.1. Բանկի հետ կապված անձանցից (բացառությամբ՝ սույն կարգի 2.2 կետում նշված անձանց)

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 ORD 11#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 25/04/19</i>	<i>Խմբագրություն 10</i>	<i>էջ 2/3</i>

ավանդները ներգրավվում են համաձայն տվյալ պահին Բանկում գործող համապատասխան ներքին իրավական ակտերի:

2.2. Բանկի, «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ, «ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ և «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ աշխատակից հանդիսացող Բանկի հետ կապված անձանցից ավանդները ներգրավվում են նույն պայմաններով (համաձայն «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ավանդների ընդունման ընթացակարգի [ACBA 75 PR 09](#)), ինչ պայմաններով ներգրավվում են Բանկի, «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ, «ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ և «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ այն աշխատակիցներից, որոնք չեն հանդիսանում Բանկի հետ կապված անձինք:

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԱՅԼ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

3.1. Բանկի հետ կապված անձինք (բացառությամբ սույն կարգի 1-ին գլխի 1.2 կետում, ինչպես նաև 2-րդ գլխի 2.2 կետում նշված գործառնությունների) այլ բանկային գործառնություններից (մասնավորապես հաշիվների սպասարկում, փոխանցումներ, քարտերով գործառնություններ և այլն), օգտվում են նույն պայմաններով, ինչ պայմաններով օգտվում են Բանկի հետ կապված անձ չհանդիսացող հաճախորդները:

ԳԼՈՒԽ 4. «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ԻՆ ՎԱՐԿԵՐԻ/ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

4.1. Բանկի խորհրդի կողմից, նվազագույնը տարին մեկ անգամ, սահմանվում են «ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ-ին (այսուհետ՝ ԱԳԲԱ Լիզինգ) տրամադրվող վարկերի/վարկային գծերի առավելագույն սահմանաչափերը՝ տվյալ տարվա համար, ինչպես նաև վարկերի/վարկային գծերի որոշ հիմնական պայմաններ (բացառությամբ տոկոսադրույքի, որը կարգավորվում է սույն կարգի 4.8 և 4.10 կետերով):

4.2. Բանկի խորհրդի որոշման հիման վրա՝ վարկերի/վարկային գծերի տրամադրման նպատակով, ԱԳԲԱ Լիզինգը հայտ է ներկայացնում Բանկի ֆինանսական գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալին, նշելով վարկերի/վարկային գծերի հաստատված առավելագույն սահմանաչափերի ցանկալի բաշխվածությունը՝ ըստ արժույթների:

4.3. Սույն կարգի 4.2 կետով ներկայացված հայտը Բանկի ֆինանսական գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի կողմից կարող է հաստատվել ամբողջությամբ կամ մասամբ:


4.4. Վարկերի/վարկային գծերի տրամադրման համար ֆինանսատնտեսական վերլուծություն չի կատարվում, վարկային կոմիտեի, ինչպես նաև իրավաբանական եզրակացության անհրաժեշտություն չկա:

4.5. Վարկերը/վարկային գծերը ԱԳԲԱ Լիզինգին տրամադրվում են առանց գրավային ապահովվածության:

4.6. Հաստատված հայտի հիման վրա կազմվում է Բիզնես վարկի/Էքսպրես բիզնես վարկի պայմանագիր՝ [eFO 72-00-316](#), և/կամ Բիզնես վարկային գծի պայմանագիր՝ [eFO 72-00-317](#):

4.7. Երկկողմանի ստորագրված և կնքված պայմանագրի մեկ օրինակը տրամադրվում է Բանկի բանկային գործառնությունների հաշվառման և ամփոփման բաժնին, որն իրականացնում է վարկի հաշվապահական ձևակերպումը:

4.8. ԱԳԲԱ Լիզինգին տրամադրվող վարկերի/վարկային գծերի տոկոսադրույքները համապատասխանում են ֆինանսական գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի կողմից հաստատվող Ֆոնդերի փոխանցման գնագոյացման (FTP) շրջանակներում սահմանվող տոկոսադրույքներ՝ [eFO 72-03-09](#), փաստաթղթի՝ համապատասխան արժույթով Սեփական ռեսուրսների դիմաց մասնաճյուղերի կողմից Բանկի կենտրոնական գրասենյակին վճարվող տոկոսադրույքներին: Վերջինս հաշվարկվում է՝ հիմք ընդունելով «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ մասնաճյուղերի և կենտրոնական գրասենյակի միջև ֆոնդերի փոխանցման գնագոյացման մեթոդական ցուցում [eFO 74-00-35](#), փաստաթուղթը:

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 75 ORD 11#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ	<i>Հաստատման ամսաթիվ 25/04/19</i>	<i>Խմբագրություն 10</i>	<i>էջ 3/3</i>

4.9. Բանկը կարող է ՀՀ կենտրոնական բանկից, ՀՀ կառավարությունից, այլ բանկերից և միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավել որոշակի պայմաններով նպատակային լիզինգային ենթավարկերի տրամադրման համար նախատեսված ֆինանսական միջոցներ և վարկերի/վարկային գծերի ձևով տրամադրել ԱԳԲԱ Լիզինգին:

4.10. Սույն կարգի 4.9 կետով սահմանված վարկերի դիմաց ԱԳԲԱ Լիզինգի կողմից վճարվող տոկոսադրույքը սահմանվում է որպես համապատասխան ֆոնդի գործող տոկոսադրույք (ներառյալ՝ տվյալ ֆոնդի հետ ուղղակիորեն կապված հարկերը և միջնորդավճարները)՝ ավելացված ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված իրացվելիության նորմատիվների (ներառյալ՝ պարտադիր պահուստավորման նորմատիվը) պահանջների բավարարման համար Բանկի կենտրոնական գրասենյակի կողմից կատարվող ծախսերը:

4.11. ԱԳԲԱ Լիզինգին տրամադրված վարկերի/վարկային գծերի տոկոսադրույքները վերանայվում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ մասնաճյուղերի և կենտրոնական գրասենյակի միջև ֆոնդերի փոխանցման գնագոյացման մեթոդական ցուցում [eFO 74-00-35](#), փաստաթղթում նշված պարբերականությամբ:

4.12. ԱԳԲԱ Լիզինգին վարկերի/վարկային գծերի տրամադրումն իրականացվում է Բանկի ակտիվների ու պասիվների կառավարման բաժնի կողմից:

ԳԼՈՒԽ 5. ԱՆՑՈՒՑԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2019 թվականի մայիսի 13-ից:

5.2. Սույն կարգն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում Բանկի խորհրդի 26.04.2018թ. հաստատած «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ հետ կապված անձանց հետ գործառնությունների իրականացման կարգը: